ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՈՐ Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ

Առաքելական մեր Մայր Եկեղեցին յաւերժում է իր նուիրեալ ու ջանադիր սպասաւորներով, որոնք փարիների անխոնջ ծառայութեամբ մեր Սրբազան Եկեղեցու հաւատոյ կանթեղը անմար են պահել եւ մեր ժողովրդի զաւակաց մտքերն ու հոգիները լուսաւորել Աւետարանի սիրով:

Սիրելի Սրբազան.

Հոգեկան մեծ բերկրանքով տեղեկացանք, որ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեակի դարակազմիկ այս տարում բոլորում էք քահանայական ձեռնադրութեան երեսուներորդ տարեդարձը, որի գեղեցիկ առիթով տարուոյս օգոստոս 7-ին Տիրախնամ թեմիդ Եկեղեցական Վարչութիւնը հանդիսաւորապէս նշելու է Ձեր յոբելեանը:

Քսանվեց տարիներ առաջ Երջանկայիշատակ Մեր նախորդ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարձր ու իմաստուն տնօրինութեամբ հոգեւոր հովիւ նշանակուեցիք Արգենտինայի հայոց թեմում՝ հովուական Ձեր գործունէութեան ողջ ընթացքում «որպէս մշակ բարի եւ հաւատարիմ» վայելելով սէրն ու յարգանքը արգենտինահայոց: Ուրախ ենք, որ Դուք հոգեւոր Ձեր առաքելութեան իրականացմանը զուգահեռ նպաստել էք նաեւ հայրենիքից բազմամղոն հեռաւութեամբ ապրող հայորդիների ազգային, կրթական ու մշակութային կեանքի զարգացմանը:

Անհաւասիկ, տասնմեկ տարի է, ինչ Դուք նուիրեալ ուխտապահութեամբ վարում էք Արգենտինայի հայոց թեմի առաջնորդի պաշտօնը՝ անսակարկ Ձեր ծառայութեամբ բարեպաշտ մեր զաւակների հոգում վառ պահելով յոյսն առ Փրկչի Ցարութիւնը, հաւատն առ հայրենի սրբութիւնները եւ սէրն առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Առաքելական Մայր Եկեղեցուն բերած բոլորանուէր Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրա-

պեպական Մեր օրհնութիւնը, սրտագին շնորհաւորանքն ու ջերմ բարեմաղթանքները:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «յամայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն հանգրուանները:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի - Մէնջ. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 17-ն Յուլիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 175